



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ հայրենակիցներ, Կոտայքի մարզի հարգարժա՛ն բնակիչներ:

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ՝ Հայաստանի Հանրապետության անկախության 26-րդ տարեդարձի կապակցությամբ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ը մեր տոնացույցի ամենապանծալի էջերից է, քանզի այդ օրը մեր ժողովուրդը միահամուռ << այո>> ասաց անկախությանը և ի լուր համայն աշխարհի հայտարարեց, որ վերստանձնում է սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու պատասխանատվությունը: Անկախության հանրաքվեն վերստին հավաստեց, որ մեր բոլոր հաղթանակների գրավականը ամփոփված է հայի անսասան ոգու և միասնական հաստատականության մեջ:

Ազատագրական մարտերի և մաքառումների հաղթահարմամբ իրականացված մեր ժողովրդի նվիրական երազանքը վերագնահատելով՝ պետք է գորակցենք մեր երկրի ու պետության զարգացման և հզորացման գործընթացին:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում ամենայն բարիք:

Թող անկախությունը դառնա ոչ միայն նպատակ, այլև կենսակերպ, Մայր Հայրենիքի բարօրությանը ծառայելու սրբազան պարտականություն:

Հարգանքով՝



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ